ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 13

02 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2024թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 15 անդամներ:

Բացակա էին՝ Անահիտ Բաբայանը, Նազիկ Գեվորգյանը, Սեվդին Թեջոյանը, Հրանդ Հարությունյանը, Սարգիս Հարությունյանը, Վարդկես Ղարիբյանը

Նիստը վարում էր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Լյուդվիկ Յայլոյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Աննա Առաքելյանը

Լսեցին
ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼՅՈՒԴՎԻԿ ՅԱՅԼՈՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի 2024 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 13 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 167-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԱՄՓՈՓԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼՅՈՒԴՎԻԿ ՅԱՅԼՈՅԱՆ/

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142.2-րդ հոդվածի 5-8-րդ մասերի, 142.3-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի ավագանու «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» խմբակցության, <<ԱԶԱՏԱԿԱՆ>> խմբակցության և <<Զարթոնք>> խմբակցությանն ուղարկված 2024 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 3437՝ համայնքի ղեկավարի արտահերթ ընտրությանը թեկնածու առաջադրելու մասին գրությունը, հիմք ընդունելով ավագանու անդամների բաց քվեարկության արդյունքները.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի ղեկավարի 2024 թվականի դեկտեմբերի 2-ի արտահերթ ընտրության արդյունքները՝ համաձայն որի Խոյ համայնքի ղեկավար է ընտրվում «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» խմբակցության կողմից ներկայացված թեկնածու Լյուդվիկ Գրիշայի Յայլոյանը:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 168-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼՅՈՒԴՎԻԿ ՅԱՅԼՈՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի դեկավարի կողմից երդման օր սահմանել 2024 թվականի դեկտեմբերի 5-ին ժամը 12:00 -ին:

2.Երդման արարողությունը կազմակերպել Արմավիրի մարզի Խոյ համայնքի Արշալույս գյուղի վարչական շենքում, հասցեն՝ Արմավիրի մարզ, գյուղ Արշալույս 20 փողոց 5 հասցե:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 169-Ա/

Ավագանու անդամներ

ԼՅՈՒԴՎԻԿ ՅԱՅԼՈՅԱՆ

ՀՐԱՅՐ ԱՍԱՏՐՅԱՆ

ԱՆՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՎԱՉԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԼՅՈՒԴՎԻԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԼԻԼԻԹ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ

ԷԴԳԱՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՌՈԲԵՐՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՍՈՖԻԱ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

ՌՈՒԲԵՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

ԱՐՏԱԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԼԻԶԱ ՌԱՊՅԱՆ

ԻՐԻՆԱ ՍԻՐՈՒՆՅԱՆ

ԱՐՄԱՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ

ԼՅՈՒԴՎԻԿ ՅԱՅԼՈՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Աննա Առաքելյանը _____